



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 օգոստոսի 2022 թվականի N 1334-Ն

ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայտարարել պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների վարժական հավաքներ՝ երեք ամիս ժամկետով՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը:

2. Վարժական հավաքները հայտարարվում են պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝

1) ռազմական ունակությունների կատարելագործման.

2) մասնագիտական վերապատրաստման.

3) մասնագիտական պատրաստման.

4) բարձրագույն կրթություն ունեցող ենթասպայական կազմից պահեստազորի սպաների պատրաստման նպատակով:

3. Վարժական հավաքներին ներգրավել մինչև 318 քաղաքացու, որոնցից 210-ը՝ կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի, 10-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 98-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

4. Սահմանել, որ վարժական հավաքներին ներգրավվում են՝

1) մոտոհրաձգային մասնագիտություններով մինչև 79 պահեստագորային, որոնցից՝ 9 պահեստագորային՝ 2022 թվականի սեպտեմբերի 22-28-ը ներառյալ, 18 պահեստագորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 1-7-ը ներառյալ, 34 պահեստագորային՝ 2022 թվականի նոյեմբերի 8-17-ը ներառյալ, 18 պահեստագորային՝ 2022 թվականի նոյեմբերի 15-24-ը ներառյալ.

2) հակաօդային պաշտպանության մասնագիտություններով մինչև 16 պահեստագորային՝ 2022 թվականի նոյեմբերի 14-23-ը ներառյալ.

3) կապի մասնագիտություններով մինչև 71 պահեստագորային, որոնցից՝ 66 պահեստագորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 3-12-ը ներառյալ, 5 պահեստագորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 9-ը ներառյալ.

4) հետախուզական մասնագիտություններով մինչև 26 պահեստագորային՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-28-ը ներառյալ.

5) անօդաչու թռչող սարքերի մասնագիտություններով մինչև 40 պահեստագորային՝ 2022 թվականի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 7-ը ներառյալ.

6) ռադիոէլեկտրոնային պայքարի մասնագիտություններով մինչև 17 պահեստագորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 17-26-ը ներառյալ.

7) տեխնիկական մասնագիտություններով մինչև 11 պահեստագորային՝ 2022 թվականի նոյեմբերի 14-23-ը ներառյալ.

8) թիկունքային մասնագիտություններով մինչև 44 պահեստագորային՝ 2022 թվականի հոկտեմբերի 1-7-ը ներառյալ.

9) տեղագրական մասնագիտություններով մինչև 14 պահեստագորային՝ 2022 թվականի նոյեմբերի 21-30-ը ներառյալ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան